ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 18 սեպտեմբերի 2014թ.

Նախագահ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 7 անդամներ: Նիստին հրավիրվել էր նաև տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Պ. Ն. Ասիլբեկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ֆակուլտետում մասնագիտական խմբերի ստեղծում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան /
2. *Հարատև ուսումնառության համակարգ սոցիալական պատվերին համապատասխան:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *2013-14թթ. ուստարվա II կիսամյակի I լուծարքային շրջանի ամփոփում:*
   /զեկ.Մ. Ա. Զաքարյան/
4. *Ընթացիկ հարցեր:*

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց, որ անհրաժեշտ է կազմել կրթական ծրագրեր ֆակուլտետի մասնագիտությունների համար՝ համապատասխան բարձրագույն կրթության պահանջների: Կրթական ծրագրերը պետք է արտացոլեն նախնական գիտելիքները, դասավանդվող առարկաները, ուսումնառության ձևերը և կրթական արդյունքները: Զեկուցողն առաջարկեց ստեղծել մասնագիտական խմբեր, որոնք մեկամսյա ժամկետում պետք է վերանայեն կրթական ծրագրերը և ներկայացնեն ֆակուլտետի խորհրդի հաստատմանը: Նա առաջարկեց օգտվել ԵՊՀ-ի և այլ առաջատար ԲՈՒՀ-երի փորձից: Զեկուցողը «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության համար ներկայացրեց հետևյալ մասնագիտական խումբը.

1. Զաքարյան Մանվել Աշոտի-դեկանի ժ/պ
2. Քամալյան Ռաֆայել Ռուբենի-Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ
3. Դավթյան Նարինե Նվերի-Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս
4. Հովսեփյան Անահիտ Միերի-ԻԿՄ II կուրսի ուսանողուհի

5. Սարգսյան Նելլի Գարեգինի- ԻԿՄ II կուրսի ուսանողուհի

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության մասնագիտական խումբը.

1. Զաքարյան Մանվել Աշոտի-դեկանի ժ/պ
2. Ցուցուլյան Արտակ Վոլոդյայի-Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ
3. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի-Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դասախոս
4. Ասիլբեկյան Պավել Նորիկի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ
5. Դավթյան Հակոբ Սամվելի-ՔԿԳ I կուրսի ուսանող

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի անդամների կողմից եղավ ընդհանուր քննարկում ներկայացված ցուցակի վերաբերյալ:

Քննարկման արդյունքում եղավ ընդհանուր առաջարկ, որ ԷՀՄ և ծրագրավորում-1 առարկան նախատեսված 16ժ. դասախոսության և 48ժ. գործնական դասընթացը բաշխել 32ժ. դասախոսության և 32 ժ. գործնական ժամաքանակի:

Առաջարկեցին հաստատել կատարել փոփոխություն կրթագրքում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության մասնագիտական խմբի հետևյալ ցուցակը.

1. Զաքարյան Մանվել Աշոտի-դեկանի ժ/պ
2. Քամալյան Ռաֆայել Ռուբենի-Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ
3. Դավթյան Նարինե Նվերի-Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս
4. Հովսեփյան Անահիտ Միհրի-ԻԿՄ II կուրսի ուսանողուհի
5. Սարգսյան Նելլի Գարեգինի- ԻԿՄ II կուրսի ուսանողուհի

2. Հաստատել «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության մասնագիտական խմբի հետևյալ ցուցակը.

1. Զաքարյան Մանվել Աշոտի-դեկանի ժ/պ
2. Ցուցուլյան Արտակ Վոլոդյայի-Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ
3. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի-Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դասախոս
4. Ասիլբեկյան Պավել Նորիկի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ

5. Դավթյան Հակոբ Սամվելի-ՔԿԳ I կուրսի ուսանող

Ֆակուլտետի խորհրդի նախագահը մասնագիտական խմբերին տվեց ընդհանուր հանձնարարական կրթական գրքի նորացման և ընթացիկ գործընթացի մասին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ընդգծեց, որ հաշվի է առնվել աշխատաշուկայի և ժամանակակից տնտեսության պահանջները, հարատև ուսումնառության համակարգի անհրաժեշտությունը, համապատասխան՝ սոցիալական պատվերին իրականացվեց մասնագիտությունների փոփոխություն՝ կատարվել է ընդունելություն *«Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտությամբ, որի շրջանավարտների կարիքը առկա է մեր մարզում: Նրանք կիրականացնել հանրապետության ողջ տարածքի հողի, անշարժ և շարժական գույքի կադաստրային աշխատանքները: Զեկուցողը միաժամանակ ներկայացրեց, նաև, որ ապահովված է նշված մասնագիտության դասավանդման համար անհրաժեշտ մասնագետներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պ. Ն. Ասիլբեկյանը: Նա առաջարկեց, որ կապված *«Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտության կայացման հետ անհրաժեշտ է ֆակուլտետում ստեղծել«Քարտեզագրության և գեոինֆորմատիկայի» լաբորատորիա: Նիստի մասնակիցների կողմից պաշտպանեցին առաջարկը և որոշեցին ֆակուլտետի խորհրդի որոշումը լաբորատորիայի ստեղծման վերաբերյալ ներկայացնել տնօրենություն՝ քննարկման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն, ֆակուլտետում ստեղծել «Քարտեզագրության գեոինֆորմատիկայի» լաբորատորիա:

2. Հանձնարարել ամբիոններին ընթացիկ քննությունների հարցաշարերը նախապատրաստել և ժամանակին տրվեն ուսանողներին:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահը ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի քննաշրջանի II լուծարքային շրջանի արդյունքները՝ ֆակուլտետում առկա է մեկ ակադեմիական պարտք ունեցող ուսանող /ԻԿՄ II կուրս/:

Ընթացիկ հարցերի մասին Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, որ կապված մասնագիտությունների փոփոխման հետ անհարժեշտ է լուծարել «Քիմիայի և կենսաբանության» լաբորատորիան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Գ. Վ. Գուլակյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրենություն հաստատել ֆակուլտետի կառուցվածքային հետևյալ փոփոխությունը. ըստ մասնագիտությունների անհրաժեշտության լուծարել «Քիմիայի և կենսաբանության» լաբորատորիան:

ՆԱԽԱԳԱՀ	Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ